# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 18 » օգոստոսի 2026թ. N ՄՌ/523-Ա

ք. Արմավիր

**«ԵՐՎԱՆԴԱՇԱՏԻ ԳԵՎՈՐԳ ԱՅՎԱԶՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2026 թվականի օգոստոսի 17-ի ՄՌ/521-Ա որոշումը՝ «Երվանդաշատի Գևորգ Այվազյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում գույքի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

**Որոշում եմ՝**

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին (Ա. Վասիլյան)՝ հանձնաժողովի աշխատանքների մասնակից դարձնել «Երվանդաշատի Գևորգ Այվազյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Նազիկ Դանիելյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովի նախագահին (Ա. Վասիլյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և

արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ (Ա. Վասիլյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզպետի

2026 թվականի ___փետրվարի 18___-ի

N ՄՌ/ 523 -Արոշման

# ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

**Հանձնաժողովի նախագահ՝**

Ա.Վասիլյան

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի աշխատակազմի
Ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

**Անդամներ՝**

Ս.Սաֆարյան

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի աշխատակազմի
Ֆինանսական վարչության
գլխավոր մասնագետ

**Հանձնող՝**

Ա. Խաչունց

«Երվանդաշատի Գևորգ Այվազյանի անվան
միջնակարգ դպրոց»պետական ոչ առևտրային
կազմակերպության տնօրենի և վարչատնտեսական մասի
համակարգողի պարտականություններ կատարող

**Ընդունող՝**

Ա. Ավետիսյան

«Երվանդաշատի Գևորգ Այվազյանի անվան
միջնակարգ դպրոց»պետական ոչառևտրային
կազմակերպության վարչատնտեսական
մասի համակարգող

Восстановимая подпись

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**